

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարանի տեղեկատվական կենտրոն – մամուլի սրահ

Մարզպետարանում գործում է տեղեկատվական կենտրոն–մամուլի սրահը, որի նպատակն է հանրությանը մատուցել մատչելի տեղեկատվություն, ինչպես նաև ստեղծել հնարավորություն մարզպետարանի և այլ պաշտոնական կայքերում առկա տեղեկատվությանը տեղում ծանոթանալու, մարզպետարանի պաշտոնատար անձանց առցանց նամակներ և հարցումներ հղելու համար:

Տեղեկատվական կենտրոնում առկա են հեռախոսակապ/ֆաքս (0223) 2-73-37, պատճենահանման և տեսապատճենահանման սարքեր, տպիչներ, 4 համակարգիչներ, որոնք ապահովված են ինտերնետ կապով:

Կենտրոնում տրամադրվում է անհրաժեշտ տեղեկություններ մարզպետարանի պաշտոնատար անձանց դիմելու նպատակով տեղեկատվության հարցման օրինակելի ձևերի, մարզպետարանի կանոնադրական գործառույթների, կառուցվածքի, ինչպես նաև Կոտայքի մարզի համայնքների և ենթազերատեսչական կազմակերպությունների վերաբերյալ:

Կենտրոնը ստեղծում է հնարավորություն նաև մարզպետարանի պաշտոնատար անձանց ուղղված առցանց նամակների ընթացքին ծանոթանալու համար:

Մարզպետարանի տեղեկատվական կենտրոնն ապահովում է <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքով սահմանված գործառույթների ամբողջական իրագործումը և մարզպետարանի տնօրինման տակ գտնվող տեղեկատվությունների մատչելի մատուցումը:

Մամուլի-սրահ

Մամուլի սրահը նախատեսված է մարզպետարանում լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ միջոցառումներ անցկացնելու համար համապատասխան պայմաններ ապահովելու նպատակով.

- Մամուլի ասուլիսներ
- Ճեպագրույցներ
- Շնորհանդեսներ
- Հաշվետվությունների ներկայացումներ
- Մեմինարներ
- Կլոբ սեղաններ
- Հանդիպում-քննարկումներ

Մամուլի սրահն իր հնարավորություններով աջակցություն է առաջարկում նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերին և ենթագերատեսչական կազմակերպություններին՝ վերջիններիս կողմից ևս վերը նշված բնույթի միջոցառումները մարզպետարանի մամուլի սրահում կազմակերպելու համար:

Մամուլի սրահում առկա են անհրաժեշտ բոլոր միջոցները մարզպետարանում հավատարմագրված լրագրողների աշխատանքը պատշաճ կազմակերպելու համար.

*Հավելված
ՀՀ Կորապթի մարզպետի
2010 թվականի հունիսի 22-ի
N 211-Ն որոշման*

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

<<... 2. Լրագրողի հավատարմագրումն իրականացվում է «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

Հավատարմագրված լրագրողի գործունեությունը Մարզպետարանի տարածքում կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով խոսքի ազատության ապահովման՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան:

3. Մարզպետարանը՝

1) որևէ ձևով կամ որևէ եղանակով չի իրականացնում հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն.

2) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ.

3) լրագրողների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին տրամադրում է միաժամանակ.

4) հավատարմագրված բոլոր լրագրողներին հնարավորինս շուտ տեղեկացնում է Մարզպետարանի այն միջոցառումների ժամանակի և անցկացման վայրի մասին, որոնք կազմակերպվում են լրագրողների համար կամ նախատեսված է լրագրողների մասնակցությունը միջոցառումներին (այսուհետ՝ Մարզպետարանի միջոցառումներ:

Տեղեկատվությունը լրագրողին փոխանցելու պատշաճ ձև է համարվում էլեկտրոնային փոստով հաղորդումը: Լրագրողի էլեկտրոնային հասցեի բացակայության դեպքում Մարզպետարանը միջոցներ է ձեռնարկում տեղեկատվությունն այլ միջոցներով փոխանցելու համար: >>...